ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

<01> օգոստոսի 2017թ. N 395-Հ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԹԵՄԱՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 759-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) էլեկտրոնային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողների 2017 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագիրը և թեմաները՝ համաձայն հավելված 1-ի.

2) թղթային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողների 2017 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագիրը և թեմաները՝ համաձայն հավելված 2-ի.

3) գնումների համակարգողի ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատակիցների և գնումների համակարգողի որակավորում ունեցող ֆիզիկական անձանց 2017 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագիրը և թեմաները՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
օգոստոսի 01-ի N 395Ա հրամանի

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԸ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ

ԾՐԱԳԻՐ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օր I

Թեմա 1 - Օրենսդրական փոփոխություններ գնումների համակարգում (1 ժամ)

Թեմա 2 - Գնման գործընթացը, պատասխանատուները, գնումների նախապատրաստումը (1 ժամ)

Թեմա 3 - Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները (1 ժամ)

Թեմա 4 - Գնման ձևերը (1 ժամ)

Թեմա 5 - Գնման ձևերի (մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնում) կիրառման պայմանները (1 ժամ)

Թեմա 6 - Պայմանագրի կառավարում և կատարում (1 ժամ)

Օր II

Թեմա 1 - Գործնական օրինակով (առցանց) armeps.am/ppcm համակարգի միջոցով գնումների պլանի կազմում, փոփոխությունների կատարարում, գնման հայտի հաստատում և armeps.am/ppcm էլեկտրոնային համակարգից անցում էլեկտրոնային գնումների armeps համակարգ (1,5 ժամ)

Թեմա 2 - Գործնական օրինակով (առցանց)՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով գնման ընթացակարգի (մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնումներ) հայտարարում, հրավերում փոփոխությունների կատարում, պարզաբանումների տրամադրում, հայտերի բացում և գնահատում, ընտրված մասնակցի որոշում, պայմանագիր կնքելու հայտարարության կազմում, պայմանագրի շնորհում, կնքված պայմանագրի հայտարարության կազմում (3 ժամ).

Թեմա 3 - Գործնական օրինակով (առցանց) գնումների հաշվետվողականության էլեկտրոնային համակարգում տեղեկատվության հրապարակում, պայմանագրի կառավարում և պայմանագրի արդյունքների հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպում (1,5 ժամ)

Հավելված N 2
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
----------ի N -Ա հրամանի

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԸ

ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օր I

Թեմա 1 - Օրենսդրական փոփոխություններ գնումների համակարգում (1 ժամ)

Թեմա 2 - Գնման գործընթացը, պատասխանատուները, գնումների նախապատրաստումը (1 ժամ)

Թեմա 3 - Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները (1 ժամ)

Թեմա 4 - Գնման ձևերը (1 ժամ)

Թեմա 5 - Գնման ձևերի (մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնում) կիրառման պայմանները (1 ժամ)

Թեմա 6 - Պայմանագրի կառավարում և կատարում (1 ժամ)

Օր II

Թեմա 1 - Գործնական օրինակով գնումների պլանի կազմում, փոփոխությունների կատարարում, հրապարակում, գնման հայտի հաստատում (1,5 ժամ)

Թեմա 2 - Գործնական օրինակով՝ թղթային եղանակով գնման ընթացակարգի (մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնումներ) հայտարարում, հրավերում փոփոխությունների կատարում, պարզաբանումների տրամադրում, հայտերի բացում և գնահատում, ընտրված մասնակցի որոշում, պայմանագիր կնքելու հայտարարության կազմում, պայմանագրի շնորհում, կնքված պայմանագրի հայտարարության կազմում (3 ժամ).

Թեմա 3 - Գործնական օրինակով պայմանագրի կառավարման և կատարման գործընթացի կազմակերպում (1,5 ժամ)

Հավելված N 3
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
դեկտեմբեր 01-ի N 395-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԸ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օր I

Թեմա 1 - Օրենսդրական փոփոխություններ գնումների համակարգում (1 ժամ)

Թեմա 2 - Գնման գործընթացը, պատասխանատուները, գնումների նախապատրաստումը (1 ժամ)

Թեմա 3 - Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները (1 ժամ)

Թեմա 4 - Գնման ձևերը (1 ժամ)

Թեմա 5 - Գնման ձևերի (մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնում) կիրառման պայմանները (1 ժամ)

Թեմա 6 - Պայմանագրի կառավարում և կատարում (1 ժամ)

Օր II

Թեմա 1 - Գործնական օրինակով գնումների պլանի կազմում, փոփոխությունների կատարարում, հրապարակում, գնման հայտի հաստատում (1 ժամ)

Թեմա 2 - Գործնական օրինակով՝ թղթային եղանակով գնման ընթացակարգի (մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնումներ) հայտարարում, հրավերում փոփոխությունների կատարում, պարզաբանումների տրամադրում, հայտերի բացում և գնահատում, ընտրված մասնակցի որոշում, պայմանագիր կնքելու հայտարարության կազմում, պայմանագրի շնորհում, կնքված պայմանագրի հայտարարության կազմում (2 ժամ).

Թեմա 3 - Գործնական օրինակով պայմանագրի կառավարման և կատարման գործընթացի կազմակերպում (1 ժամ)

Թեմա 4 - Գործնական օրինակով (առցանց) armeps.am/ppcm համակարգի միջոցով գնումների պլանի կազմում, փոփոխությունների կատարարում, գնման հայտի հաստատում և armeps.am/ppcm էլեկտրոնային համակարգից անցում էլեկտրոնային գնումների armeps համակարգ (1 ժամ)

Թեմա 5 - Գործնական օրինակով (առցանց)՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով գնման ընթացակարգի (մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնումներ) հայտարարում, հրավերում փոփոխությունների կատարում, պարզաբանումների տրամադրում, հայտերի բացում և գնահատում, ընտրված մասնակցի որոշում, պայմանագիր կնքելու հայտարարության կազմում, պայմանագրի շնորհում, կնքված պայմանագրի հայտարարության կազմում (1 ժամ).

Թեմա 6 - Գործնական օրինակով (առցանց) գնումների հաշվետվողականության էլեկտրոնային համակարգում տեղեկատվության հրապարակում, պայմանագրի կառավարում և պայմանագրի արդյունքների հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպում (1 ժամ)